ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋԸ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի հայրապետական ընտրության աշխատանքներն ավարտելուց հետո համազգային եկեղեցական ժողովի պատգամավորները և նրանց հետ հայրենիք ժամանած հյուրերը էքսկուրսիաներ կատարեցին դեպի Մայր Հայրենիքի զանազան վայրերը։

Նրանք տեսան պատմական Զվարթնոցը, ս. Գայանեի, Հռիփսիմեի, Սևանի ու Գեղարդի հինավուրց մենաստանները, համբուրեցին ս. Մեսրոպի սրբազան շիրիմը, պտտեցին Մայր Հայաստանի նորակերտ մայրաքաղաքի բոլոր անկյունները, տեսան նրա հոյակապ ու գեղատեսիլ ժպտուն շենքերը, կանաչագեղ ու լայնարձակ փողոցները, այցելեցին հայրենի երկրի կուլտուրկրթական հաստատությունները՝ դպրոցները, բարձրագույն կրթական հիմնարկները, թանգարանները, գրադարանները, հիվանդանոցները, շքեղազարդ թատերասրահները, դիտեցին Հայաստանի արվեստագետների ինքնագործ աշխատանքները, կինոնկարները, նկարչական ցուցահանդեսները, եղան հայրենի երկրի կոլխոզներում, սովխոզներում, արդյունաբերական ձեռնարկություններում և այլն։

Սփյուռքի հայ ժողովրդի ներկայացուցիչները սեփական աչքերով տեսան իրենց վերածնված ու ծաղկած Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նոր կյանքը, ականատես եղան այն բազմազան ստեղծագործ աշխատանքներին, որ կատարում է հայ ժողովուրդը իր ազատ Հայրենիքում։ Նրանք համոզվեցին, որ նախկին բազմաչարչար, խոշտանգված ու հարստահարված Հայաստանը միայն Սովետական Միության մեծ ընտանիքի մեջ գտավ իր ֆիզիկական գոյության ապահովությունը և միայն սովետական պայմաններում է աճում ու զարգանում հայ ժողովրդի ազգային կուլտուրան, նրա ինքնուրույն պետական կյանքը։

Զվարթ ու կենսախինդ Մայր Հայրենիքի բերկրալից կյանքին ականատես սփյուռքի հայ պատգամավորները կպատմեն արտասահմանի մեր հայ եղբայրներին ու քույրերին Մայր Հայաստանի չտեսնված այս վերելքը և կցրեն այն չարամիտ առասպելները, որ հայ ժողովրդի թշնամիները տարածել են սփյուռքի հայության մեջ Մայր Աթոռի և Սովետական Մայր Հայաստանի մասին։

Սփյուռքի հայ պատգամավորները, վայելելով Մայր Աթոռի սիրալիր հյուրընկալությունը, Մայր Հայրենիքից վերադարձան դոհ սրտով, ներշնչված խորին երախտագիտական զգացմունքով առ Սովետական Հայրենիքն ու հայ ժողովուրդը ի տրիտուր այն հոգատար վերաբերմունքի, որ նրանց ցույց տրվեց Մեծ Միության երկրում։

Նրանք տարան Մայր Հայրենիքի հողն ու ջուրը սփյուռքի հայ եղբայրներին ու քույրերին՝ նրանց հայրենատենչ կարոտն առնելու համար։

Պատգամավորները Զվարթնոցում:



Պատգամավորները Սևանում «Միկոյան» նավի վրա:

Պատգամավորները Սևանի ափին:

Պատգամավորները տանում են հող Մայր Հայրենիքից: